<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամ

<<Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ Կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում.>>

Դաստիարակ՝ Մարինե Հունանյան

Մանկապարտեզ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի թիվ 3 <<Հեքիաթ>> >>ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_____3

ԳԼՈՒԽ. 1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ_____5

1.1.Ինտեգրված ուսուցման դերն ու նշանակությունը մանկապարտեզում_____5

1.2.Ինտեգրված պարապմունքի արդյունավետությունը ուսուցման կազմակերպման գործընթացում_____6

1.3.Դիդակտիկ խաղերի դերը ինտեգրված պարապմունքի ընթացքում_____8

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ_____13

2.1.Արձանագրող փուլ_____13

2.2.Ձևավորող փուլ_____13

2.3.Պարապմունքի պլան_____14

2.4.Դիտորդների դիտարկումներ_____14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ_____15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ_____16

Ներածություն

<<Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործնթացի կարևորագույն բնագավառներից է, որի էությունը համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի որակական փոփոխությունն է>>:

(Մեջբերում)

Նախադպրոցական դաստիարակության հայեցակարգում, որպես ուսուցման ծրագրային խնդիրների իրականացման, երեխաների զարգացման առկա վիճակի ուսումնասիրման համար միջոց են ինտեգրված պարապմունքները, որոնց կազմակերպման ժամանակ նախատեսում ենք մեկ գերակա նպատակ, մեկ կամ ավելի ենթանպատակներ: Ինտեգրված պարապմունքները միջոց են պահպանելու միջառարկայական կապերը, որոնք էլ հնարավորություն են տալիս զարգացնելու, ընդլայնելու երեխաների պատկերացումները շրջակա աշխարհի մասին, խրախուսում է հաղորդակցման փորձեր, խթանում է զրույցի, երկխոսության մեջ մտնելու մղումները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- Զարգացնել ինքնուրույն մտածողությունը, նախաձեռնությունը, համագործակցությունը:
- Ապահովել երեխայի բազմակողմանի զարգացումը՝ հոգատար, աջակցող միջավայրում

- Ամրակայել գիտելիքները բնության, դրա վրա ներազդելու, հետաքրքիր մտավոր կապեր ստեղծելու
- Ապահովել միջառարկայական կապերը, նպաստել ինքնուրույն աշխատանքներին
- Զարգացնել ներանձնային և միջանձնային հարաբերությունները, կատարելագործել շփման և երկխոսելու հմտությունները

Օգտակարություն- Հետազոտական այս աշխատանքը կարող է փորձի փոխանակման միջոց հանդիսանալ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար:

ԳԼՈՒԽ1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՒՄԸ՝ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1.Ինտեգրված ուսուցման դերն ու նշանակությունը մանկապարտեզում

Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատությունը, մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, երևակայությունը: Նպատակին հասնելու ուղին ուսումնառությունը ինտեգրված պարապմունքի միջոցով կազմակերպելն է: Այսպիսի պարապմունքները կարևորում են գործունեության այնպիսի ձևեր ինչպիսիք են ինքնուրույն մտածողությունը, նախաձեռնությունը, համագործակցությունը, հնարամտությունը, սեփական կարծիքի կարևորումը, հաստատակամությունը:

Ինտեգրված ուսուցումը ապահովում է երեխայի զարգացման բոլոր ոլորտները, չի կենտրոնանում մեկի վրա: Ինտեգրված պարապմունքներին դաստիարակը այնպես է անում, որ երեխան զգա մեծահասակի հոգատարությունը, երեխաների ուսումով նրանց շահագրգռվածությունը: Ինտեգրված ուսուցումը երկխոսությունները դարձնում է անկեղծ մտածողությունը՝ ծավալուն: Այս ամենը հնարավորություն է ստեղծում ինքնավստահ կիրառելու ձեռք բերված գիտելիքները:

Ինտեգրված ուսուցմանը ներգրավվում են ծնողները, որոնք միշտ տեղեկանում են մանկապարտեզում տարվող աշխատանքների մասին: Դաստիարակն էլ ոգևորվում է նոր բովանդակությամբ, նոր մեթոդներ կիրառելու գրավիչ հնարավորությամբ: Ինտեգրված ուսուցումը ենթադրում է

առարկաների միավորում՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու համար: Ծրագիրը այնպես է կազմվում, որ երեխաները տեսնում ու հասկանում են և' առարկայական ոլորտների կապը, և' նրանց կապը կյանքի հետ: Ինտեգրված պարապմունքի ստեղծման ժամանակ դաստիարակը պետք է հաշվի առնի.

- Արդյո՞ք թեման համապատասխանում է երեխայի հետաքրքրություններին
- Նպաստու՞մ է երևակայական և ստեղծագործական մտքի խթանմանը
- ՈՒնե՞ն հնարավորություն համագործակցելու և պատասխանատվություն կրելու
- Կարո՞ղ են ավելացնել գիտելիքները և փորձը

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ԵՆ.

- Ցուցադրական նյութերով խմբային աշխատանք
- Երեխաների անհատական աշխատանք՝ բաշխիչ նյութերով
- Աշխատանք տարբեր խաղերով
- Պարապմունքի ընթացքում զուգահեռաբար աշխատանք է տարվում նաև ծրագրի մյուս բաժիններից՝ պահպանելով օրգանական կապ՝ դրանց միջև ապահովելով մոտավոր ծանրաբեռնվածության բաշխումը

1.2. Ինտեգրված պարապմունքի արդյունավետությունը ուսուցման կազմակերպման գործնթացում

Ինտեգրված ուսուցումը ապահովում է երեխայի զարգացման մտավոր, ֆիզիկական, սոցիալական, հուզական, էսթետիկական ոլորտների

զարգացումը: Սովորելու ընթացքում մեծահասակները երեխաների ուշադրությունը կենտրոնացնում են նյութի բովանդակության վրա: Նրանք զաիգացնում են երեխաների մտածողությունը աստիճանաբար ավելի ծավալուն և անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով: Ինտեգրված ուսուցման իրականացման արդյունքում դրսևորվում են երեխաների հետևյան հատկանիշները

- Հոգատար են միմյանց նկատմամբ
- Ստեղծում են հետաքրքիր մտավոր կապեր
- Կատարելագործում են իրենց շփման և երկխոսության հմտությունները
- Ձևավորվում են որպես համայնք

Ինտեգրված ուսուցումը միջառարկայական է: Այս փաստը երեխաների համար նշանակալի է դառնում, երբ նրանց առաջարկվում է լուծել նոր խնդիր կամ ուսումնասիրել նոր գաղափար: Երեխաների հետաքրքրություններին տեղ հատկացնելը ապահովում է նրանց շահագրգռվածությունը և հետաքրքրասիրությունը: Մեր ակտիվացած փոքրիկները դառնում են ազատ ու համարձակ, վերլուծություններ ու առաջարկներ կատարող, տրամաբանող: Նրանցից յուրաքանչյուրը ինքն է ընտրում իր անելիքը,անում է այն, ինչն իր սրտով է:

Ինտեգրված պարապմունքներին ներկայացվող պահանջները

- Կարևորել և իմանալ երեխաների տարիքային և անհատական զարգացման առանձնահատկությունները

- Ապահովել երեխայի ստեղծագործական մտածողության ձևավորման նախադրյալները
- Ձևավորել դրական վերաբերմունք և հետաքրքրասիրություն շրջակա աշխարհի նկատմամբ
- Ստեղծել զարգացնող միջավայր՝ նախասիրությունների և ձեռներեցության զարգացման համար
- Նպաստել հարցասիրության զարգացմանը

1.3.Դիդակտիկ խաղերի դերը ինտեգրված պարապմունքի ընթաքում

Խաղային գործընթացը դիդարկվում է, որպես երեխայի վարքի փորձառության հավաքագրման, կշռադատման միջոց, նրա բարոյական, սոցիալական ձգտումների ձևավորման հիմք: Խաղի ընթացքում ստեղծվում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստում է երեխայի ուշադրության, նրբազգացողության, հոգատարության, պատրաստակամության, բարյացակամության, արդարացիության ձևավորմանը: Խաղը անչափ օգնում, նպաստում է անհատական աճին ու զարգացմանը: Խաղերը համարվում են երեխայի ուսուցման և դաստիարակման բաղկացուցիչ մաս: Խաղերը մտավոր խնդրի իրականացումն է դաստիարակի օգնությամբ՝ պարապմունքի միջոցով: Խաղերն ունեն խնդիր, գործողություն, կանոններ և արդյունք: Դիդակտիկ խաղերի հիմնական խնդիրը ուսոցողական է, որի լուծման համար երեխան պետք է մտածի, համեմատի, հանգի որոշ եզրակացության; Երեխային հետաքրքրում է միայն խաղային կողմը, նպատակին շուտ և ճիշտ հասնելը: ՈՒսուցողական խնդիրը լուծվում է անկախ երեխայի կամքից ու գիտակցությունից:

Խաղերի բաղկացուցիչ մաս են՝

- Խնդիր
- Գործողություն
- Կանոններ
- Արդյունք

  Դիդակտիկ խաղերը օգնում են նոր նյութի յուրացմանը, անցած նյութի ամրապնդմանը և համարվում են պարապմունքի ձև: Դիդակտիկ խաղերը կիրառվում են տարբեր նպատակներով
- Որպես նոր գիտելիքի հաղորդման միջոց
- Վարժությունների և գիտելիքների ամրապնդման միջոց
- Գիտելիքների ստուգման միջոց
- Ճանաչողական գործունեության ակտիվացման միջոց
- Անհատական գործունեության միջոց

Խաղերն օգնում են երեխայի ինքնահաստատմանը, ինքնատիրապետմանը: Դաստիարակվում է ազնվություն, արդարամտություն, զսպվածություն, վճռականություն և կամային որակներ: Մեծ տեղ է տրվում նաև բառախաղերին, որոնք պահանջում են բառերի ճիշտ ընտրություն: Խաղերն արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է.

- Նախապատրաստել խաղի տեղը
- Ընտրել որակյալ նյութեր
- Ապահովել երեխային անհրաժեշտ պահանջները
- Խաղը անցկացնել ուրախ, հմտորեն

Դիդակտիկ խաղերի նորացման ուղիներն են

- Փոխել դաստիարակի կողմնորոշումը
- Հաշվի առնել երեխաների տեսակետներն ու կարծիքները
- Խաղը հագեցնել նոր, ժամանակակից պահանջներով
- Խաղը ներկայացնել որևէ ստեղծագործության մեջ

Դիդակտիկ խաղերի ներկայացվող պահանջներն են

- Խաղը պետք է լինի հրապուրիչ
- Ստեղծել զգացմունքային, զարգացնող միջավայր
- Խրախուսել երեխաներին
- Ստեղծել տրամադրություն, խաղին մասնակցելու ցանկություն

Երեխաների ակտիվ գործունեության համար անհրաժեշտ են.

- Դիդակտիկ խաղալիքներ, լոտոներ, դոմինոներ
- Խաղային հավաքածուներ
- Խաղեր մտավոր զարգացման համար՝ նախշանկարներ (փազլ)
- Կառուցողական նյութեր
- Նկարների հավաքածուներ, քարտեր

Ինտեգրված պարապմունքին անցկացվելիք դիդակտիկ խաղերի օրինակներ

Ինչ կա պարկում

Նպատակը՝

Կարողանալ անսխալ անվանել ծանոթ առարկաները և ավելի լավ ճանաչել դրանք:

Անհրաժեշտ պարագաներ՝

Գունավոր պարկ, երեխաներին ծանոթ տարբեր առարկաներ, խաղալիքներ:

Ընթացքը՝

Դաստիարակը գունավոր պարկի մեջ լցնում է ծանոթ խաղալիքներ:

Երեխաները նստում են շրջանաձև: Դաստիարակը առաջարկում է յուրաքնչյուրին հանել խաղալիքը, ցուցադրել և անվանել: Կարելի է նշել գույնը, ձևը,նյութը, հանած ձայնը: Բոլորը մասնակցում են խաղին և գուշակում հանելուկներ:

Խաղալիքների խանութ

Նպատակը՝

Սովորեցնել քաղաքավարության վարքի կանոններ: Զարգացնել գունազգացողությունը, ակտիվացնել բառապաշարը:

Անհրաժեշտ պարագաները՝

Զամբյուղով տարբեր խաղալիքներ, դարակներով պահարան:

Ընթացքը՝

Երեխաները զամբյուղից հանում են խաղալիքները, դաստիարակը դասավորում է պահարանում: Հետո գնորդ-երեխաները գալիս են խանութ: Սկզբում գնումներ կատարում է դաստիարակը: Վաճառող կարող են լինել երեխաները:

Գուշակիր՝ ինչը չկա

Նպատակը՝

Վարժեցնել օ հնչյունի ճիշտ արտասանությանը՝ բառամիջում:

Զարգացնել դիտունակությունը, ուշադրությունը, նկատել, որ առարկան չկա:

Պարագաները՝

Դրոշակ, աթոռ, այլ խաղալիքներ՝ օ հնչյունով:

Ընթացքը՝

Նստել կիսաշրջանաձև: Դաստիարակը ուշադրությունը հրավիրում է խաղալիքների վրա, անվանում դրանք: Կանչված երեխան անվանում է խաղալիքները, ապա շրջվում: Դաստիարակը թաքցնում է մեկը, հետո երեխան շրջվում է և գուշակում, թե ինչը չկա:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1. Արձանագրվող փուլ

Հետազոտությունը անց է կացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի թիվ 3 <<Հեքիաթ>> մանկապարտեզի կրտսեր 2-րդ ա խմբի 25 սաների հետ:

Արձանագրվող փուլի նպատակն է՝ ճշգրտել երեխաների պատկերացումը տարվա եղանակների (աշուն) մասին:

2.2. Ձևավորող փուլ

Ձևավորող փուլի նպատակն է՝ ամրապնդել և խորացնել գիտելիքները տարվա եղանակների, նրա ստեղծած բարիքների և առանձնահատկությունների մասին:

2.3. Պարապմունքի պլան

https://docs.google.com/document/d/1eDgdz3y_k9rB7lF1zVsJSMTj3lwY70NBjnRJ2DBqh_k/edit

2.4.Դիտորդների դիտարկումներ

Դիտորդներ – ԿՄՍ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, տնօրեն, մեթոդիստ, կրտսեր 2-րդ խմբի դաստիարակ

Պարապմունքը հաջողված էր: Դաստիարակն ու սաները հետաքրքիր լուծումներով, հնարքներով, դիդակտիկ հարուստ նյութերի, խաղերի միջոցով՝ քայլ առ քայլ հասան իրենց նպատակին: Դաստիարակը պարապմունքի ընթացքում օգտագործեց այլընտրանքային մեթոդներ, սցենարային լուծումներ: Երեխաները փայլուն աշխատեցին արվեստի, խոհանոցի կենտրոններում, որտեղ նրանց ականջը շոյում էր մեղմիկ ու քնքուշ աշնանային մեղեդին: Փոքրիկները ակտիվ էին և անկաշկանդ: Պարապմունքը ինտերակտիվ էր, ինտեգրված: Դիտորդների կարծիքով պարապմունքը ուսանելի էր, արդյունավետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Մանկապարտեզում ինտեգրված պարապմունքների անցկացումը հարուստ փորձ ունի, որոնք նպատակաուղղված են

- Ինքնուրույն մտածողության, նախաձեռնության զարգացմանը
- Անձնական կարգապահության և շրջապատող աշխարհի ընկալման

- Մտավոր, սոցիալական, հուզական, էսթետիկական ոլորտների համակողմանի զարգացման
- Հոգատար, աջակցող միջավայրում՝ բազմակողմանի զարգացած երեխաներ
- Երեխաների մտավոր, լեզվական ունակությունների և ինքնավստահության ներշնչման
- Ծնողների ներգրավմանը բազմաթիվ աշխատանքներում

Առաջարկություն

Կցանկանայի, որ հետագա աշխատանքների ընթացքում առավել շատ լինեն այլընտրանքային մեթոդներն ու դրանց կիրառման նոր ձևեր առաջարկվեին թե՛ մանկավարժների և թե՛ վերապատրաստողների կողմից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<ՈՒսումնական ձեռնարկ>>

Հեղինակ՝ Լ. Սմբատյան, Հ. Միտոյան Երևան 2010թ

2. Մ. լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում

Լ. Սմբատյան 2014թ

3. Խոսքի զարգացման պարապմունքը կրտսեր 2-րդ խումբ

4.Նյութեր համացանցից

5. Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր

ԿԳ Նախարարության Ազգային Ինստիտուտ